

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

25.04.2017թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա. Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բադոյանը - մարզպետի տեղակալ
- Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Ա.Ջանազյանը, Դ. Մանուչարյանը, Գ. Հակոբյանը, Է. Հախվերդյանը, Ա. Սահակյանը, Ա. Ադրոյանը, Վ. Դոխոյանը, Ս. Խեչումյանը, Հ. Մկրտչյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ապլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Մանուկյանը - մարզպետի խորհրդական
- Տ.Էվինյանը - մարզպետի օգնական
- Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական

Օրակարգում՝

1. ա) Վերջին դասի միջոցառումների մասին
բ) « Ազգ-բանակ» միջոցառումների մասին
գ) Համայնքների հնգամյա զարգացման ծրագրերի մասին
դ) Համայնքներում աղբահանության, աղբավայրերի և շաբաթօրյակների անցկացման մասին
ե) Մարզպետարանի կոլեկտիվի՝ մարզի պատմամշակութային վայրեր էքսկուրսիա կազմակերպելու մասին
զ) Համայնքների խոշորացման ծրագրի մասին

/Ջեկ.Ա. Նալբանդյան/
2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին

/Ջեկ.Ն.Սարգսյան/
3. ՀՀ ԿԳ նախարարությունում կայացած դպրոցական շենքերի արդյունավետ օգտագործման խնդրի վերաբերյալ խորհրդակցության մասին

/Ջեկ.Մ.Սայադյան/
4. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին

/Ջեկ.Հ.Պապոյան/
5. Մարզում գյուղատնտեսական աշխատանքների կատարման ընթացքի մասին

/Ջեկ.Գ. Հակոբյան/
6. Այլ հարցեր

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Հ. Թադևոսյանին, Տ. Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել Լոռու մարզի համայնքների կողմից հողի հարկի և վարձակալության վճարների պլանավորված գումարների հավաքագրման նկատմամբ:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Հ. Թադևոսյանին, Տ. Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Ջանազանին, աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Օհանյանին՝

„Մաքուր Հայաստան, ծրագրի իրականացման նպատակով ստեղծել միջգերատեսչական հանձնաժողով և հրատապ միջոցառումներ ձեռնարկել համայնքի վարչական տարածքների չսահմանված վայրերում առաջացած աղբանոցները մաքրելու և վերացնելու ուղղությամբ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ն. Սարգսյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Ս. Ղուբայանին՝

Ներկայացնել տեղեկատվություն դպրոցների 10 - 11 –րդ դասարանների այն աշակերտների մասով, ովքեր ցանկություն են հայտնել կրթությունը շարունակել ՀՀ ՊՆ Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանում:

/Ժամկետ՝ 28.04 /

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին՝

ա/ Ներկայացնել առաջարկություններ մարզի քաղաքային համայնքների հանրակրթական դպրոցների տարածքների արդյունավետ օգտագործման և աշակերտների կրթության համար բարենպաստ շենքային պայմանների ապահովման վերաբերյալ: / Ժամկետ՝ 27.04.2017թ./

բ/ Պատրաստել շրջաբերական նամակ մարզպետարանի ենթակայության կրթական հաստատությունների ավարտական դասարանների „ Վերջին դաս„ միջոցառումը կազմակերպել մանկավարժին և սովորողին վայել, բացառել միջամտությունը ծնողների կողմից իրականացվող կազմակերպչական աշխատանքներին:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ